

ՇԱՀԱՆ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

(Ա. ՏԱՐԻ)

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 19)

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ Խառնագան “, Երուանդ Սրմաքեչխանլեան . — Ս.Էրա (ամսանախան բար-
տե), Տիգրան Աճեմեան . — Դճապեան արձագանգ (արտատիւ լուրէս), Յ. Ս.
Փափաղեան . — Մասքեա Մամուրեան, Ե. Ս. — Կիսամտեակ :

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

“ Շ Ա Ի Ի Ղ ”

Կը հրատարակուի ումէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Ե

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արտասահմանի տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ Շ Ա Ի Ի Ղ ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգին , նամակ , յօդուած , լրագիր և գիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PÉNSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :
Յ. Մարտիկոսյան
Բաղնիքի Գործարարական
Կոմիտէի Ելակարգի Կոմիտէի
Կողմէն

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

Թիւ 19

“ ԽԱՐԱԶԱՆ ”

Պ. Սուրեն Պարթևեան Բարիզէն կը շրկէ մեզի գրքոյի մը բանֆէի ձեւով : Կը յայտարարէ որ երբ գրամ՝ ունենայ ատեն ատեն հրապարակ պիտի հանէ այս տեսակ պատշիւունք, խարազան խորագրին տակ : Պ. Պարթևեանին անունը արդէն ծանօթ էր հոչակաւոր ու վաղանցիկ Վաղրուան Չայնին քանի մը օրինակներովը, որոնք երկրասահանակ մը հայհոյութիւն, տրցակ մը նախատինք, հեզիզ մը թուք ու մուր ժայթքեցին աջ և ահեակ, ու յետոյ լռեցին : Վաղրուան Չայնը — զոր այնքան գեղեցիկագիտօրէն ուրակեց Գամեր-Արշաիր — երկամեայ դադարէ մը ետքը կը վերածնի՝ այլապէս հզօր, այլապէս վայրաք ստատմով մը : Խարազանը — ինչպէս որ էր ահարեկիչ (°) աւունէն յայտնի է — կոչում ունի ամբողջ հայութեան կեղտութիւնները ձաղկելու, գանակակոծ ընելու . և

արդէն իսկ, առաջին թիւէն, անիկա բռնած է Չոպանեանի օձիքէն, հրապարակ քաշած է զայն ու ահեղ մշտրակին հարուածները կը սուրեն կը շառաչեն անոր մարմնին շարժը, միտերը փեռեկ փեռեկ կը պատուան, արիւնը կը վազէ յորդառատ, ու Պարթևեան, անդուլթ, ամենի, կը շարունակէ զարնել !!! :

Խարազանը, արուեստագիտական տաղանդով յօրինուած հրատարակութիւն մը, արատահամանեան մարտագուռ ու խեղագար մամուլին ամէնէն խորունկ, ամէնէն ազատ ու ամէնէն անագորոյն արտայայտութիւնն է, իր ետին, շատ հեռուն ձգելով ինչ որ տեղի ունեցած է յարգ այդ մամուլին մէկ պատկառելի մասին մէջ : Զանիկա կարգալէ յետոյ կ'ըզտաս այն հիւծող, տառապեցնող պժգամներէն մէկը զոր արտավարակ հաճոյամուրթեան վայելքի վայրկեանէ մը ետքը միայն կ'ունենաս : Հոգիդ զգուսնքով մը կը լլկուի . մտքիդ մէջ սպչեցուցիչ շատրում մը կը տիրէ : Գրական արուեստագէտի մը

— որ ամէնէն վսեմ՝ ու ազնիւ էջերը արտադրելու շնորհովը օժտուած կերելայ — անգիտակից, անձնասպան թափով մը տղմակոյտի մը մէջ անասնականօրէն մխրճուելուն ներկայ կը գտնուիս վշտի, սարսափի ու արգահատանքի խառնաշփոթ տպաւորութեան մը ներքեւ : Գեղեցիկին ու այլանդակօրէն տգեղին չտեսնուած, չլուած համադրութիւնն է ան : Հազուադէպ ուղեղի մը կազմաւորութեանը մէջ առաջ եկած մէկ շփոթութիւնը, մարմանքըն է, գուցէ ջղագարութեան դասական մէկ մորմաքիչ ձեւը :

Ու — ցաւալի բան — մինակ Պարթեւեանը չէ որ այս հիւանդութեան երեւոյթը կ'ընծայէ սանձարձակ, գրեթէ հաճոյալի փութկոտութեամբ մը : Անիկա, այդ հիւանդութիւնը, գրեթէ ամէնքս ալ ունինք, արտասահմանի այն հայերը որոնք՝ դիպուածով կամ կոչումով՝ գրական կամ լրագրական տպարէզին մէջ նետուած են : Ոմանք բուն կերպով բռնուած են հիւանդութենէն, ուրիշներ, անշուշտ նուազ դժբախտ, թեթեւապէս կը տառապին անկէ : Անոր ախտանշանները բարդ ու կնճռոտ են : Բուլը կիրքերուն, մարդկային բոլոր մնուցքներուն, անասնականութիւններուն բազմատարր ու բազմերանգ պատկերացումն է : Նախանձը, ատերութիւնը, թշնամութիւնը, և ուրիշ ինչ զգացում որ

կարելի է երեւակայել ցած, գոն հիկ ու անբան, իրարու պլլում, թնճուկուած՝ կը ձեւացնեն այդ անուշի, անպատմելի հիւանդութիւնը, որ մեր հանրային, ընտանեկան ու ընկերական կեանքը կը թունուորէ անհղ աւերումներով : Այդ ախտէն վարակուած խեղճերը կը զարնն կը տապալեն ամէն արժանիք, ամէն առաքինութիւն, ամէն սրբութիւն, ամէն ճշմարտութիւն, բաներ որոնք հիմա գետնաքարչ կը քաշկուտուին, աննշմար կը կոտորուին, կը ճզմուին, կոչնչացուին :

Խառագանը — որ ցաւազին ինքնախարէութեամբ մը այս պղծութեանց վախճան մը գնելու անկեղծ զգացումէ մը վարուած կը հռչակէ ինքզինքը — իր առաջին քայլին մէջ իսկ ամէնէն վրդովեցուցիչ, ակնբերել նշանները ցոյց կուտայ համաճարակին : Այն միջոցին որ ճշմարտութիւնը երեւան պիտի հանէր ու արժանիքը պիտի մատնանշէր, մէկը սուրբ կոխան կընէ, միւսին վրայ կը թքնէ միամիտ սիւնիզմով մը : Պարթեւեան՝ ուսմբի պէս չէկ ու շուղարձակ բառեր կը թոցունէ հանդրպատ մարդուն քթին բերնին, իր հարուստ ու գեղարուեստական ֆուազներու ֆրանսաւանլ յօրինուածքին ցանցերուն մէջ բազմաթիւ անձեր — որոշ դիրքի, համբաւի ու արժանիքի տէր — կը դայթեն, կիլնան, կը քաշկուտուին անգթօրէն, մինչ Զօպանեան, մեծ մարտի-

րոսը , ինաստակը , ռաթէն , գալա-
րատանջ կը յօշոտուի այս անակըն-
կալ խարազանին անիննայ հարուած-
ներուն տակ : Նորօրինակ , գրական
մատթիրօջօթ մը , ամբարիշտ սա-
զանդէ մը վիժուած :

*
* *

Պ. Սուրէն Պարթեւեան , իր
պարսաւագրի գերին մէջ , անգութ
ծայրայեղութեան մը գիմած է : Իր
զոհին՝ Չօպանեանի մասին ըսածնե-
րուն մէջ գուցէ գտնուին բաներ որ
ճշմարտութիւն միայն եղած ըլլան :
Ոչ ոք , սակայն , կտրգալէ յետոյ
այդ անըմբռնելի պռոշիւռը , մազ
մը չպիտի շեղի Չօպանեանի մասին
իր կազմած դազափարէն , անոր
նկատմամբ տածած իր յարգանքէն :
Ասիկա անխուսափելի հետեւանքն է
յարձակումին նենգաժէտ ու չարա-
միա անխորհրդութեանը , որ մեր-
կապտրանոց կը յայտնուի գրքոյկին
ամէն էջերէն : Հեղինակը սր ինք-
զինքին քանճշէթեռ տխուրսը կու-
տայ , անզգուշ վրէժխնդիր մըն է
ըկ , ու անճարտար , վասն զի իր
թշնամին վարկաբեկելու , զգետնե-
լու ապահովագոյն միջոցը չէ՛ ընտ-
րած :

Պարթեւեան ապիկար քանդող
մըն է գերազանցօրէն , որ իր ցա-
նած աւերակներուն վրայէն պիտի
քալէ անցնի՝ առանց զանոնք դար-
մանելու ամէնապզտիկ խղճահա-

րութեան : Գրեւու իր շքեղ եղա-
նակը ցաւագին հաճոյաւէտութեան
մը ստատըրը պիտի ըլլայ միայն :
Ուրիշ ոչինչ :

*
* *

Այսպէս , իր Խարագանով , Պ.
Սուրէն գերադրական աստիճանը
կը ներկայացնէ գրական անբարո-
յականութեան , եղբայրակից մը
և մրցակից մը հանդիսանալով ան-
սնուանելի Ճանկիւլեանին որուն
սժգոյն ճակտին վրայ միշտ պիտի
չողայ դիմակաւորներուն թանձր
արտառը : Եւ սակայն Պարթեւեանը
զարգացած , հմայքոտ մտաւորա-
կան մը , Ճանկիւլեան ագիտութե-
նէ ու տառապանքէ խորտակուած
թշուառ մը , ի՞նչպէս՝ պահ մը՝ հա-
ւասար գետնի վրայ զիրար կը բռտ-
նան : Ինչո՞ւ այս պիղծ ու անարգ
եղբայրակցութիւնը : Ինչո՞ւ Չօպան-
եան , մեր արգի գրականութեան
ամէնէն բազմարդիւնուներհունդէմ-
քերէն մէկը , ողորմելի Գարֆաեան
մը ուղղութեան բերելու համար , կը
բռնէ անոր ծոծրակէն ու գետին կը
զարնէ անսովոր ուժգնութեամբ մը :
Շարժումի բարիզեան թղթակիցը ,
անորակելի վահագնը , ինչո՞ւ իր
գունչը զազրութեանց մէջ կը մխր-
ճէր Չօպանեանէն վրէժ լուծելու
համար աշխարհի ամէնէն վարնոց
ձեւովը : Ինչո՞ւ Չօպանեան , Շար-
ժումը և անոր թղթակիցները հար-

ուածերու համար, փողոցային լուտանքներու ամէնէն շքեղ հաւաքածոյովը կ'աղտոտէր իր Անահիսի գրական ու գեղարուեստական էջերը:

Անհունապէս կարելի է երկարել այս « ինչու ճներուն շարքը, վասն զի հիւանդութիւնը որով արտասահմանի մամուլը և անոր ներկայացուցիչները կը տանջուին, երթարով ծանր հանգամանք մը կը ստանայ, անիկա կը թարսխտտի, կը շարաւի, ապականութեան խաւով մը կը թանձրանայ:

Արտասահմանի հայութեան վրայ վէճեցեղդաի մահացուցիչ խորշակը կը փչէ, այնպիսի տագնապալից վայրկեանի մը ուր զգացումներու, համոզումներու, բարոյական թափերու, ազնիւ ճիգերու ներդաշնակօրէն զոգաւորուած համանուագ մը հազիւ թէ պիտի կարենար հայուն անպարագրելի տառապանքին պղտիկ սփոփանք մը ըլլալ: Յեղափոխութեան, գրականութեան, արդարութեան, իրաւունքի և դատարարակութեան անունով կը մղուին ամէնէն տպուշ պոյքորները՝ ողբալի հետեւանքներով, կը գործուին ամէնէն ընդվզիչ սրբապղծութիւնները, ամէնէն ցած վատութիւնները: Ու կը մղուիս մըտածել թէ այն վիթխարի չարիքը, որով պատահասուեցանք, մի գուցէ զմեզ բարոյական ու մտաւորական վերջնական անկումի մը մատնած ըլլայ:

*
* *

Չօպանեան, իր արժանիքներուն ու մատուցած ծառայութիւններուն քովն ի վեր նշանակելի թերութիւններ ու ծանր վնասակարութիւններ ունեցաւ: Երբեք չպիտի մոռցուի իր այն անպատեհ շտապումը, որով ուղեց օգտուիլ հայ հասարակութեան արամադրութենէն, Անահիսի առջին թիւին մէջ իսկ քարկոծելով յեղափոխութիւնն ու յեղափոխականները, ու գլխիվայր նետուելով ազգային-քաղաքանութեան այնպիսի բազմակնճիւռ հարցերու մէջ, որոնց լուսաբանութիւնը ապահովապէս իր ձեռքով չէ որ պիտի կատարուէր: Ասիկա կատարեալ Քիւսաֆօ մը եղաւ, որ իսկապէս բնաւ ու է գեղարուեստական հանգամանք չունէր: Պարթեւեան, իր անխորհուրդ յարձակումի ցնորակոծութեանը մէջ, չէ գիտցած մատը գնել իր զոհին ամէնէն տրկար կողմին վրայ:

Եւ յետոյ ինչպէս բացատրել Անահիսի խմբագրապետին տարօրինակ ընթացքը զոր ցոյց առաւ իր նախկին ուսուցչին, Մինաս Չերազի նկատմամբ, ամէն անգամ որ տուիթ ունեցաւ անոր ընդդիմաբանելու իր թերթին մէջ: Մինչև իսկ ու է իցէ Չիպաի մը ինդիլին առթիւ չվարանեցաւ ընդդէմի անօրէնին « երկդիմի դեբ » մը վերադրել: Եւ Պարթեւեանի « անկարելի պա-

րոն Մինասն՝ ալ իր Ֆրանսերէն թերթին մէջ — զոր վերջապէս օտարներն ալ կը կարգան — չդեգեւեցաւ իր նախկին աշակերտը անուանելու «Օսկար Ռայլաէի փաստաբանը» : Ակն ընդ ակաւնի ամէնէն ամօթալից , ամէնէն դարշելի կիրարկումը :

Եւ ասոնք այն անձերն են որ արտասահմանի մամուլին մէջ առաջին ու պատուաւոր տեղը կը բռնեն իբր թէ , և օտարներու առջև հայուն և անոր անհամուժ ցաւերուն թարգմանը ըլլալու տիտղոսը կուտան ինքզինքնուն . անոնցմէ ետքը եկողները՝ միեւնոյն չարաշուք ուղղութեան ջերմեռանդ հետեւորդներն են , և — քանի որ անկեղծութիւն պիտի ընենք — այս տողերը գրողն իսկ չէ կրցած երբեմն օձիքը ազատել համապարփակ այդ հիւանդութեան ճիրաններէն որոնք այսօր կը կաշկանդեն կը բղկանն արտասահմանեան մամուլին գրեթէ մեծամասնութիւնը :

Ժամանակակից հայութեան մէջ ամէնէն կսկծալի երեւոյթն է ստիկա : Մէջտեղէն վերջներու համար զայն՝ յաւէտ անբաւականէ ճեքրափե Պարթեւեանի մը խարազանը , որուն փայփայանքին ենթարկուելու ամէնէն աւելի արժանի մարդը ինքն է անկասկած :

Երուանդ Մամէտօյանի ան

Վ Ե Ր Ա

(ՍՄՈՒՍՆԱԿԱՆ ԲՍՐՔՆԵՐ)

Ն . քաղաքին արեւմտեան կողմը , գրեթէ քաղաքէն դուրս , համակ քարաչէն , նեղ եւ երկաթապատ պատուհաններով , քառակուսի շէնք մը կայ : Դեռ նորեկ մը ըլլալով , քաղաքին այդ կողմերը թափառած միջոցիս այլանդակ , ճեղքոտած պատերով այդ հին շէնքը հետաքրքրութիւնս չարժեց , և խկոյն անցորդի մը մօտենալով բարեւեցի :

— Ներեցէ՛ք , պարոն , սա շէնքը ի՞նչ է :

— Նահանդային բանտը :

— Նահանդային բանտը , կրկնեցի ինքս ալ զարմանալով թէ ինչպէս չէի կրցած գուշակել , ու գրեթէ մեքենաբար քայլերս այդ կողմը ուղղուեցան :

Արդեօք ի՞նչ ցաւեր կային փակուած հոն , այդ քարէ պատերուն տարին :


Երկաթէ հաստ ձողերով վանդակեայ դրան մը առջև կորաքամակ պատու կին մը կծկտած էր , ձեռքը աղտոտ թաշկինակ մը բռնած , աչիւրը արցունքոտ :

— Մայրիկ , բանտին դուռը ա՞ն է :

— Աս է , դուստկա :

Դուռը , որ բանտին բակէն ուղղակի փողոցին վրայ կը բացուէր , բանաարկեալներու տեսութենէն խափանելու համար արտաքին աշխարհը՝ տախտակորմով մը փակուած էր :

Աչքերովս դրան բոլորտիքը զանգակի կոճակ մը փնտռեցի , բայց չը գտայ : Զեռքովս դրան ձողերէն մէկը բռնելով ուժգնակի ցնցեցի :



Հաստ երկաթներուն հանած խուլ գրգռիւնին վրայ վանդակին ետեւը խոժոռագէմ, երկար ընչացքով ալեւոր մարդ մը երեւցաւ եւ խուպոտ ձայնով մը հարցուց.

— Ի՞նչ կուզես:

— Խնդրեմ, պարոն, արդեօք կարելի՞ է բանտը այցելել:

— Դատախազէն թուղթ ունի՞ս:

— Ո՛չ. ի՞նչ թուղթ կուզէք:

Եւ մարդը հեռացաւ, առանց նոյն իսկ պատասխանելու հարցումիս՝ դաժան ակնարկ մը նետելով պառաւ կնոջ վրայ:

Յաջորդ օրը, միեւնոյն ժամուն, ծանօթ անձի մը շնորհիւ ընդհ. դատախազի պաշտօնատունէն ստացած արտօնագիրը ձեռքս՝ մօտեցայ միեւնոյն դրան եւ ցնցեցի զայն աւելի ուժով:

Միեւնոյն խոժոռ գէմքը, միեւնոյն խուպոտ ձայնը:

— Ի՞նչ կուզես:

— Բանտը այցելել կուզեմ:

— Դատախազէն թուղթ ունի՞ս:

— Այո՛:

Եւ թուղթը յաղթականօրէն երկընցուցի մարդուն, որ առաւ զայն եւ վայրկեան մը հեռանալէ ետքը, վերադարձաւ ու դուռը բանալով,

— Մտիք, ըսաւ:

* * *

Քառակուսի փոքրիկ բակը վանդակորմով մը երկու մասի բաժնուած էր: Մէկ մասին մէջ, որ փողոցի դրան կողմը կիյնար, վանդակորմին երկայնութեամբը, իրարմէ երեքական քայլ հեռաւորութիւնով, սուինաւոր հրացաններով զինուած զինուորներ կայնած էին անշարժ՝ աչքերնին յա-

ռած իրենց հսկողութեանը ենթարկուած բանտարկեալներուն վրայ, որոնք բակին միւս մասին մէջ, շէնքին կողմը, ամէն ուղղութիւններով կը պտըտէին, երկաթեայ դառագեղաներու մէջ փակուած դաղաններու նման:

Մեր բայց հուժկու մարդ մը, առանց նայելու իր աջ ոտքին կապուած հաստ շղթային ծանրութեանը, անդադար չըջաններ կընէր վանդակորմին ներսը չափովը, գլուխը առջեւը ծռած, երկու ձեռքերը ետին, կաղնիկազ: Ուրիշ մը տաք արեւին ներքեւ քարերուն վրայ ընկողմանած եւ իր եղոտ թուխ շապիկին օձիքը դուրս քաշած, անոր ծալքերուն մէջ մանրաքնին խուզարկութիւններ կը կատարէր ոտիկանութեան գործակալի մը լրջութեամբը:

— Պարոնը արդեօք որո՞ւ հետ կը փափաքի խօսիլ, ըսաւ, համազգեստաւոր պաշտօնեայ մը քաղաքավարութեամբ զիս բարեւելէ ետքը:

— Սա մարդուն հետ, եթէ կարելի է, պատասխանեցի, ցոյց տալով բանտին դրանը քարէ սեմին վրայ նստող մարդ մը, գունատ, նիհար, սեւ գանգուր եւ երկար մազերով, թուխ եւ սեւաչուի, որ արմուկները ծունկերուն վրայ, գլուխը ձեռքերուն մէջ առած էր եւ որ առաջին վայրկեանէն իսկ ուշադրութիւնս գրաւեց:

— Նի՛քօյին հետ. շատ աղէկ, ըսաւ պաշտօնեան, հրամմեցէք խօսարանը. եւ առաջնորդեց զիս ցած եւ մութ խուց մը:

Երկու վայրկեան վերջը նոյն պաշտօնէին հետ ներս մտաւ գանգրահեր ու տժգոյն մարդը:

— Ներեցէ՛ք, Պ. Նիքօ, ըսի, զինքը քովս նստեցնելէ եւ սիկար մը հը-

բամբակեղև յետոյ, զոր մարմեց, արդեօք կարելի՞ է ձեր բանտարկութեան պատճառները իմանալ:

— Բանտարկութեանս պատճառները... ըսաւ անջեւը նայելով եւ դառն ու խորին հառաչանք մը կոկորդը թխմուեցաւ:

— Ի՞նչ յանցանքի համար դատապարտուած էք:

— Մարդասպանութեան համար:

— Ո՞վ սպաննեցիք:

— Կինս:

— Կի՛նդ:

— Այո՛, պարո՛ն, կինս, օ՛հ, խեղճ կինս, կրկնեց թշուառ մարդը եւ գլուխը կրկին կուրծքին վրայ իյնալով արցունքի խոշոր կաթիլ մը իր դունատ այտէն վար գլորեցաւ:

— Ներեցէ՛ք, ըսի, ձեզ պատճառած տառապանքիս համար, բայց հետաքրքիր էի իմանալ ձեր պատմութիւնը, կը հաճի՞ք պատմել:

Օրինաց արամադրութեան համաձայն բանաային պաշտօնեան ինքն ալ ներկայ էր մեր խօսակցութեան: Նիքօ գլուխը վեր վերցուց ու մէյմը ինձի եւ մէյմըն ալ պաշտօնէին երեսը նայելէն ետքը դարձեալ գլուխը ծոեց եւ գրեթէ ինքն իրեն խօսելով ըսաւ:

— Չէ՛, չեմ կրնար. անկարելի է: Այնքան տառապեցայ, այնքան տանջուեցայ, որ այլ եւս լեզուով չեմ կրնար պատմել՝ ինչ որ սրտով կզգամ:

«Ա՛հ, այո՛, աւելցուց յանկարծ շտկուելով, կրնաք իմանալ: Ու մէկ ձեռքը կուրծքը տանելով վայրկեան մը հագուստին տակը փնտտելէն յետոյ՝ մաշած, աղտոտ եւ ծալլուած թուղթ մը հանեց ու ինձ տուաւ:

— Կարդացէ՛ք, ըսաւ, ատիկա իմ դատապարտութեանս վճռագիրն է,

ոճրագործութեանս պատմութիւնը:

Եւ թշուառ մարդը կրկին գլուխը կուրծքին վրայ ծռած, լուռ ու մունջ արտասուել սկսաւ:

Իսկ եւ խորապէս յուզուած, դողդոջուն մատներով՝ թուղթին մաշած ծալքերը չպատուելու համար զգուշութեամբ բացի եւ կարդացի:

* * *

189... թուականին վերջերը Ն. քաղաքի բնակիչներէն Նիքօ անուն երիտասարդը ամուսնացաւ նոյն քաղաքացի օր. Վէրայի հետ:

Նիքօ եւ Վէրա իրենց ամուսնութեան առաջին քանի մը տարիները անցուցին խաղաղ եւ երջանիկ:

Բայց միթէ տեւական երջանկութիւնը կա՞յ:

Զանազան ձախորդութիւններու պատճառաւ Նիքօյի գործերը խանգարուելով, իբր թէ իր վիշտերը մոռնալու համար անիկա դիմեց նախ արբեցողութեան եւ յետոյ խաղամոլութեան: Ու այս երկու հրէշային մոլութիւնները այդ խաղաղ տան մէջ մուտ գտնալէն ի վեր ընտանիքին խաղաղութիւնը վերիվայր չըջուեցաւ:

Նիքօյի գործերը այլ եւս բոլորովին աւրուած էին եւ ինք սկսաւ ըստէպ գիշերները դուրսը անցընել:

Իսկ գժբախտ կինը կանխատեսելով իր գաւակներուն համար պատրաստուող մութ ապագան՝ սոսկաց: Խնդրեց իր ամուսնէն թոյլ տալ որ ինքը Գ. քաղաքին մէջ բացուած ձեւագիտութեան վարժարանը մտնելով գոնէ արհեստ մը սորվի եւ կարենայ գէթ իր ձեռքի աշխատանքով ընտանիքին պէտքերուն օգնել:

Երկու ամուսինները դիւրաւ հա-
մաձայնեցան եւ Վէրան ճամբայ ին-
կաւ դէպի Ք. քաղաքը ու վեց ամիս
աշակերտելէ եւ զարմանալի սրամտու-
թեամբ մը ձեւագիտութեան արհեստը
սորվելէն յետոյ վերադարձաւ իր ԲԸ-
նակավայրը: Վարժարան գտնուած մի-
ջոցին ուսանողուհիներէն տիկին Ա. Ի
հետ այնքան մտերմացած էր որ եր-
կու սրտակից բարեկամուհիները փո-
խադարձաբար իրարու պատմեր էին
իրենց ընտանեկան կեանքի բոլոր
դառնութիւնները: Ու Վէրա իր տու-
նը վերադառնալէն քիչ ետքը նամակ
մը ստացաւ իր բարեկամուհիէն, նա-
մակ մը որ սկզբնապատճառը եղաւ
խեղձ կնոջ մահուան եւ յետոյ ամ-
բողջ ընտանիքի դժբախտութեանը:

Իրիկուն մը Նիքօ իր սովորու-
թեան համաձայն ուշացած ըլլալով
մանկամարդ կինը իր գաւակները կե-
րակրեց ու քնացուց. եւ սկսաւ կար կա-
րել. սակայն յանկարծ յիշելով իր
բարեկամուհիին նամակը, զոր արդէն
տասն անգամ կարդացած ու գրպանը
պահած էր, ուզեց նորէն կարդալ
զայն:

Հազիւ առաջին տողերը կարդա-
ցած էր, սենեկին դուռը բացուելով
ամուսինը ներս մտաւ:

Խեղձ կինը, շուարած, անխորհուրդ
շարժում մը ըրաւ. ուզեց նամակը
պահել, վասն զի անոր մէջ աննպաստ
կէտեր կային Նիքօյի մասին. մարդը,
թէեւ գինով, յանկարծ մտքին մէջ
կասկած մը ունենալով ուզեց նամակը
բռնի խլել եւ ապտակեց իր կինը:
Փոքրիկ կռիւէ մը ետք նամակին
քանի մը կտորները միայն մնացին
իւր ձեռքը, իսկ միւս մասը զայրացած
կինը վաճարանին դռնակը բացած եւ
բոցերուն մէջ նետած էր արդէն:

Նիքօ, խեղացնոր, վայրենի կըքէ
մը մոլեգնած, իր մասներուն մէջ
սեղմած թղթի կտորներուն վրայ հե-
տեւեալ բառերը միայն կըցաւ կարգալ.

... Ք. քաղաք... ամուսինդ ...
... կը համբուրեմ... սիրելիս...
... գամ... գրէ ինձ... համոզուիս...
... ամուսնան... .

Ու այն օրէն Նիքօյի գանկին մէջ
ստակալի կասկած մը, կո՛յր նախանձ
մը բոյն գրին: Ան երեւակայեց թէ
իւր կինը Ք. քաղաքը գտնուած միջո-
ցին յարաբերութիւն ունեցած էր
անծանօթ մէկուն հետ եւ ամուսնա-
կան հաւատարմութեան դէմ մողան-
չած: Ա՛լ անկէց ետքը, դիւրին է
հասկնալ, վերջ չունէին ընտանեկան
անհամաձայնութիւններ, անախորժ
վէճեր ու կռիւներ, որոնք շատ անգամ
թշուառ կնոջ գանակոծումովը կը
վերջանային:

Նախատուած կինը քանի քանի
անգամներ իր կասկածոտ ամուսնոյն
առջեւ ծնրադրեց եւ անոր ոտքերուն
փարեցաւ լալազին: Քանի քանի ան-
գամներ աղերսեց, պաղատեցաւ, որ
հաւատայ իրեն, թէ բոլորովին ան-
տեղի են իր կասկածները, թէ այդ
թուղթը իր մէկ բարեկամուհիէն
ղրկուած պարզ նամակ մըն էր: Սա-
կայն իր գազանային կըքերէն կուր-
ցած, նախանձոտ ամուսինը անդըրդ-
ուելի մնաց: Երկու անգամ դիմեց Ք.
քաղաքի ձեւագիտութեան վարժարա-
նի տնօրէնին տեղեկութիւններ քա-
ղելու համար իր կնոջ վարքի մասին:
Պատասխանները թէեւ վերջին ծայր
նպաստաւոր եւ պատուաբեր էին Վէ-
րայի համար, անբաւական գտնուե-
ցան սակայն զաժան մարդուն սրտին
մէջ բորբոքած կոյր նախանձին հուրը

մարելու: Ատկէ աւելին. կնոջ անհաւատարմութիւնը երեսն հանելու համար ձեռք առած միջոցներուն ի դերեւ ելլելը աւելի կատղեցուց զինքը. ու կեանքը օրէ օր աւելի դառն, օրէ օր աւելի տաժանելի դարձաւ անխիղճ կերպով չարչարանքի մատնուած, նախատուած կնոջ համար:

Էրկանը տմարդի վարմունքը անբուժելի կերպով վիրաւորեց իր կնոջական զգայուն սիրտը, եւ օր մը վերջապէս ստիպուեցաւ որոշել ու անդարձօրէն հեռանալ իր այնքան սիրած ընտանեկան յարկէն որ իր սրտին մէջ այնքան քաղցր յիշատակներ կը զարթուցանէր: Ու գնաց իր սրտի հատոր երկու փոքրիկներուն հետ վարձու տուն մը, ձեռքի համեստ աշխատանքովը ապրելու եւ ապրեցընելու համար:

Բայց Նիքօ, գազանային նախանձի կոյր գործիքը, հոս եւս հանգիստ չթողուց իր տարաբախտ կինը: Սկըսաւ գիշեր ցորեկ յարձակումներ գործել կնոջը տան վրայ՝ անլուր նախատինքներով եւ մահուան սպառնալիքներով:

Վէրա, ճարահատ, դիմեց քաղաքական եւ կրօնական դատարանները միանգամայն, իր անձը եւ մանաւանդ զաւակները իր ամուսնին անդթութիւններուն դէմ ապահովելու եւ վերջնական ամուսնալուծութիւն պահանջելու համար:

Դատավարութեան երկար տեւողութեան միջոցին՝ օր մը Նիքօ իր մատը վիրաւորելով եկաւ իր կնոջ տունը եւ խնդրեց անկէ որ կապէ զայն: Կինը սիրով հնազանդեցաւ եւ իր ամուսինը վերստին իր քովը տեսնելու երջանկութիւնէն ինքնամոռաց՝ հազար պաղատանքով խնդրեց անկէ որ չըս-

պասէ դատարաններու միջամտութեան եւ իր զաւակներուն համար պէտք եղած հազուսաները եւ իրեղէնները, որ անոր տունը մնացած էին, ետ տայ իրեն:

Նիքօ խոստացաւ եւ կինը հրաւիրեց իր տունը:

Վէրա՝ հակառակ իր ծնողաց եւ բարեկամներուն յորդորանքին, ամուսնին տունը գնաց, մտաւ անոր սենեակներէն մէկը իր հազուսաները ընտրելու համար: Ընտրութեան միջոցին անհամաձայնութիւն ծագելով կինը դուրս ելաւ, բայց ամուսինը մտածելով որ անիկա ոստիկանութեան պիտի դիմէ, ուրիշ սենեակ մը հրաւիրեց զինքը անուշութեամբ: Ու հոն, երբ կինը գետին ծռած՝ իրեղէնները աչքէ անցընելու զբաղած էր, յանկարծ Նիքօ երկսայրի դաշոյնով մը ղինուած վագրի կատաղութեամբ իր կնոջ վրայ խոյանալով սուր երկաթը անոր փորը մխեց:

Կինը, սարսափահար եւ արիւնլուայ, սենեկէն դուրս նետուեցաւ եւ խուլ աղաղակ մը ձգեց. « սպաննեցին զիս, հասէ՛ք »: Նլաւ փողոց եւ մօտակայ տունէ մը ներս վազելով գետին փռուեցաւ անկենդան:

.

Նիքօյին դատը երեք օր տևած էր եւ դատաւորները երկարօրէն խորհրդակցելէ ու մեղմացուցիչ պարագաներ գտնելու համար իրենց ուղեղը յոգնեցնելէ ետքը 8 տարի չլթայակապ բանտարկութեան դատապարտեր էին զայն:

*
* *

Բանտին բակին մէջ խոշոր զանգակի մը ձայնը լսուեցաւ երբ հազիւ

աւարտիր էի վճռագրին ընթերցումը:

— Ներեցէ՛ք, ըսաւ պաշտօնեան, բանտարկեալներուն սենեակ վերադառնալու ժամն է:

Երեքս մէկէն ոտքի ելանք:

Թուղթը նորէն զզուշութեամբ մը ծալլելով երկնցուցի Նիքոյին, որ աղտոտ լաթի մը ծայրովը իր արցունքներուն վերջին կաթիլները կը սրբէր: Կամաց մը ետ հրեց ձեռքս:

— Կ'զգամ, ըսաւ, մահը վերջապէս չափ մը պիտի դնէ իմ տառապանքներուն: Պահեցէ՛ք այդ թուղթը եւ մահու ընէս վերջը հրատարակեցէ՛ք. թող կարդան ինծի նման . . . այրերը եւ իմ ոճրագործ ու վշտաշարչար կեանքս թող դաս մը ըլլայ իրենց համար: Կուգէի ապրիլ եւ այս մութ պատերէն դուրս ելլել. չկարծէք թէ, բանտէն խորշերուս համար, վասն զի բանտէն ու շղթայէն հազար անգամ աւելի սոսկալի խղճիխայթը պիտի մնայ ինձ. ո՛չ, այլ բարձր ձայնով պատմելու համար թէ ինչպէս կոյր նախանձի մը գործիքը դառնալով ես իմ ձեռքովս պատրաստեցի հրեշտակային կնոջ մը մահը եւ իմ ու ամբողջ ընտանեացս թշուառութիւնը: Կո՛յր նախանձ, կրկնեց ջղաձգօրէն ակռաները սեղմելով:

Սենեակէն դուրս ելանք:

* * *

Վեց ամիս ետքը՝ փողոցի պատերուն փակցուած մահազդի մը վրայ սրտի անհնարին ցաւով կարգացի Նիքոյի անունը:

Իր հեզ ու քաղցր բնաւորութեամբը անիկա ամէնուն համակրանքը չահած ըլլալով՝ վեց տարուան

բանտարկութենէ ետք ազատ արձակուած էր:

Ու մտած էր՝ անշուշտ իր կնոջը կսկծալի յիշատակին տակ ճզմուած:

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՍՏԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՈՒՐՁԸ

Կարելի՞ է որ մարդ առանց ըստամնքսի ապրի:

Սհտոտսիկ հարցում մը որ շատ տարօրինակ պէտք չէ երեւայ Շաւրիղի ընթերցողներուն երբ անո՛ք ասկից առաջ կարգային մեր «սընընդաւուրթեան կերպեր» վերնագրով քրտնիկը և գիտեն թէ ի՞նչ զմնազան միջոցներ կան սնանելու համար. միայն հետաքրքրաշարժը գիտնալն է թէ մարդ ի՞նչպէս կապրի առանց ստամնքսի և այս վերջնոյն բացակայութեան միջոցին մարտողութիւն կը կատարուի՞ թէ ոչ:

Սթրազպուրկէն ըժիշկ մը, Տօթթօր Պէօքէլ, կը հաղորդէ գիտական աշխարհին թէ քանի մը ամիսներ առաջ 38 տարեկան կնոջ մը քաղցկեղէ վարակուած ստամնքսր ամբողջովին հանած և կտրուածքին

երկու ծայրերը իրարու բերելով փակցնելէ վերջ, 22 օր շարունակ քիչ քիչ բայց ստէպ ու թեթեւ սընընդատուութեամբ մը դարմանած և 33րորդ օրը առն վերադարձուցած է հիւանդը բոլորովին առողջ վիճակի մէջ :

Գործողութեան մանրամասնութիւնները որոնք զուտ գիտական են և աւերարդ՝ հոս արտագրելը, ցոյց կուտան թէ ո՞րքան փափուկ և դժուարին գործ մըն է զոր կատարել է Տօքթօր Պէօքէլ (թէև այս փորձը նոր չէ և Բարիզի մէջ Տօքթօր Ֆէնիւ մեծ արդիւնքներ ձեռք բերած է այդ միջոցով), սակայն զարմանալի է որ մարմինը ի՞նչպէս չէ ազդուած կենսական գործարանի մը բացակայութենէն ու ընդհակառակը անմիջապէս բազմացած և ուժովցած է, վասն զի Տօքթօր Պէօքէլ կըսէ թէ այդ 22 օրուան միջոցին մէջ հիւանդին մարմնոյ ծանրութիւնը 20 լիպրա աւելցած է :

Հոս է որ մեր ընթերցողները պիտի զարմանան և գիտնալ ուզեն թէ ո՞ւր և ի՞նչպէս կը կատարուի ուրեմն մարսողութիւնը երբ ստամոքս չկայ :

Մինչև հիմա մեր ժողովուրդին հարեւանցի կերպով ըսուած էր թէ մարսողութիւնը ստամոքսին մէջ միայն կը կատարուի suc gastrigueի միջոցաւ որ pepsineի ուժովը կը գործէ ու երբեք չէ ըսուած թէ այդ

մարսողութիւնը աղիքներուն մէջն ալ կը շարունակուի :

Երբ ու երբեք մը ստամոքսին մէջ կը հասնի, այն առն այդ գործարանին դնդերային ֆիւլլըրները, աղիքներուն շարժումներէն սուսջ եկած ամենաթեթեւ ցնցումները և ստամոքսին մարսեցրնող հիւթը ձեռք ձեռքի առած կը արորեն, կը հալեցնեն և կը զտեն զայն ու քանի մը ժամէն այդ ուտելիքին մնացած մասերը կանցնին աղիքներուն մէջ որոնց երեք բաժանումներէն մինչև երկու անցնին՝ bileի ու suc pancréatiqueի օժանդակութեամբ կը զտուին կը զրկուին իրենց իւղէն որ կանցնի աղիքներուն ու մնացեալ մասերը կը վերածուին suc intestinalի միջոցաւ շաքարի, բէթոնի և ալկիւմինօզի որոնց ամբողջութեան շիջ անունը կուտան. այս շիջն է որ յետոյ զանազան գործողութիւններու ենթարկուելով կանցնի արեան մէջ և կը զօրացնէ զայն նոր սարքերով :

Ուրեմն միայն ստամոքսին մէջ չէ որ մարսողութիւն ըսուած երեւոյթը առաջ կուգայ, այլ աղիքներն ալ այդ պաշտօնին մէկ մասը կը կատարեն, ինչպէս արդէն թուրքին մէջ գտնուող բքիաշիկնը՝ իսկզբան, դեռ ուտելիքը ստամոքսին մէջ չըգացած, նշային (amidon) մասերը շաքարածին տարրի կը վերածէ :

Հետեւաբար երբ մարդ զրկուի ստամոքսէն, կրնայ սնանիլ աղիք-

ներու միջոցաւ, բաւական է որ ներածուած ուտելիքները ընտրեալ, թեթեւ և անդարար ըլլան :

Այս գիտնալով է անշուշտ որ վիրաբոյժները կը համարձակին երբեմն ստամոքսը կտրել հանել և կամ զանազան կերպեր յանձնարարել սնունդառութեան համար որոնք երբեք սարորինակ պէտք չէ թուին :

* *

Քիչ մըն ալ առողջապահական : Տեսնուած է անշուշտ որ փոքրիկ կաթնկեր մանուկներ անմիջապէս կը քնանան երբ կաթ ծծելէ յագեանան : Բնութիւնը՝ որ ամէնէն մեծ դաստիարակն է ինչպէս ամէն բանի նոյնպէս և առողջապահութեան մէջ, կը դրդէ այդ տղեկը որ քնանայ ու լաւ մարսէ :

Այս երեւոյթը ուշագրաւ է և կարժէ որ նկատողութեան առնելով մենք ալ օրինակենք և մարտողութիւննիս նպաստաւոր պայմաններով կատարելու համար ամէն ճաշէ վերջ քիչ մը քնանանք և կամ՝ ինչպէս կարգ մը առողջաբաններ կը յանձնարարեն՝ հանդարտօրէն պտոյտներ կատարենք և երբեք անմիջապէս աշխատելու, կարգալու կամ գրելու չելլանք :

Թիսօ ըսած է թէ՛ շատ մատծող մարդը ամէնէն գէշ մարտողն է . Պօքլիեօն երկար ապրելու համար լաւ ծամել և լաւ քաղել կը յանձնարարէ, իսկ Հռովմայեցի կայսր

մը այս ճշմարտութիւնը փորձով հաստատելու համար հասակով, կազմուածքով և խառնուածքով նրման իր երեք գերիններուն լաւ ճաշ մը ընելտալէ ետքը, մին պարտաքնել կուտայ, երկրորդը կարգացնել և երրորդը քնացնել ու քանի մը ժամ յետոյ երեքը մէկ գլխատել տալով ստամոքսնին բանալ կուտայ և կը տեսնէ թէ քնացողը աւելի լաւ մարսած է քան պարտաքնել և կարգացողը : Այս վերջի երկուքին տարբերութիւնը թէև չէ նշանակուած սակայն ընտրուած միջոցին բարբարոսութիւնը զգուանք կազդէ և չի թոյլատրել որ աւելի հեռունեքը ելթալով մանրամասնութիւններ վնասուենք :

* *

Վերջացնելու համար ներկայ քրտնիկը, շատ հետաքրքրաշարժ փորձի մը արձագանքը տանք մեր ընթերցողներուն :

Յիւնագէտ բժիշկները գիտկի մը որքան ժամանակուան անշնչացած ըլլալը հասկնալու համար գլխուտարաբար կը գիտնեն մարտողութեան գործարաններուն և գիտնալ կուզեն թէ ո՞ր ատտիճանի առաջ գացած է մեռետղին մարտողութիւնը ամէնէն վերջի անդառութենէն յետոյ, որպէս զի մտաւորապէս ժամ մը որոշեն :

Տէրէ փորձելով կը հաստատէ

Թէ մարտողութիւնը մարդուն մեռնելէն վերջը դեռ վեց ժամ կը շարունակուի և հազուադէպ պարագայի մէջ է որ 10 ժամ կերկարածգուի, այն ալ երբեմն ամառ ժամանակ:

Իր փորձերը կատարած է նախ շուներու վրայ անոնց կերցնելով սպիտակուցի գնդիկներ և յետոյ զանազան ժամերու մէջ (1 էն մինչև 10) զանոնք մեռցնելով հետզհետէ ստամոքսնին բացած և տեսած է որ 1 էն մինչև վեց ժամուան միջոցին մէջ այդ գնդիկները զգալի կերպով պակասած են ու վեց ժամէն անդին մնացողներուն ստամոքսին մէջ գլուխուած գնդիկներուն կշիռը տարբերութիւն չէ ունեցած:

Այս փորձերը կրկնելով ուրիշ կենդանիներու վրայ ալ, Ֆերէ իր վերոյիշեալ սրտը և վերջնական եզրակացութեան յանգած է:

Թերևս մտածողներ ըլլան թէ մարդուն մարմինը պաղելէն և արեան շրջանը կենսալէն յետոյ ի՞նչ պէս մարտողութիւնը կը շարունակուի երբ այս վերջինը մարմնոյ տաքութեանը պէտք ունենալ կը կարծուի: Լա՛ւ, բայց ստամոքսի և աղիքներու մէջ գտնուած հիւթերը, որոնք իրենք իրենց մէջ կարողութիւն ունին ուտելիքները հալեցնելու և զտելու . . . :

Վերջապէս գիտական նույն ժամանակներ օր օրի պիտի գան յեղաշրջել հին համոզումները: Այսօր կըսեն


մեզ թէ մարտողութիւնը մեռնելէն վերջը դեռ 6 ժամ կը շարունակուի, վաղը պիտի ապացուցանեն թէ մարդը մեռած տեղն ալ կը մտածէ և օր մըն ալ պիտի համոզուինք թէ . . . գիտցածներնուս և ոչ մին ճիշտ է և պէտք է նորէն սկսինք սորվելու:

Յ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Վրիպակի. — Անցեալ թիւին գիտական արձագանգին մէջ, երես 281, սիւնակ Բ., տող 32րորդ, «գիւղացին քաղաքացիէն աւելի» պարբերութիւնը կարդալ ճիշտ հակառակը:



ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ



Հայ դաստիարակութեան եւ հայ մամուլին ամէնէն արդիւնաւոր ներկայացուցիչներէն մէկը, Մատթէոս Մամուրեան, մեռեր է Իզմիրի մէջ տարիքի ու աշխատութեան ծանրութեան տակ ընկճուած:

Երկու տարիէ ի վեր ընտանեկան յարկին անկիւնը խաղաղօրէն կանցունէր իր օրերը, ա՛լ քաշուած ու է գործունէութենէ: Անշուշտ կը յիշուի թէ անցեալ տարի ալեւոր խմբագրապետին յիսնամեայ յարեւանը կատարուեցաւ ազգային ջերմ համակրանքի ընդհանուր արտայայտութեան մը մէջտեղ:

Անտարակոյս Մամուրեանի հետ կանհետանայ մէկը հին սերունդի այն ռահվիրաներէն, որոնք հայ դաստիարակութեան, լեզուին ու լրագրու-

թեան հիմերը գրին, անհունապէս դիւ-
րացնելով մտաւորական ներկայ հայ
սերունդին աշխատութիւնը: Միսաք-
եանի, Զօրեանի եւ Իւթիւճեանի
հետ ինք եղաւ որ գրաբարի այլան-
գակութիւններէն մաքրեց զոնց հայ
աշխարհիկ լեզուն, ու երեւան եկաւ
աշխարհաբարը, յտակ, դիւրահաս-
կնալի ու կոկուած:

Արեւիկայի Մասալը, Վէրթէրի եւ ու-
րիչ օտար նշանաւոր հեղինակներու
թարգմանութիւնը գլխաւոր գործը
կը կազմեն Մամուրեանի: Իր կիսամ-
սեայ հանդէսին մէջ որ երեսուն տար-
ուան կեանք մը ունի, մեծ ազմուկ
հանեցին Շահնուրի նամակները, ու-
րոնց մէջ Մամուրեան կը քննադատէր,
կը հեզնէր, կը ձողկէր, կիմաստասի-
րէր օրուան ազգային եւ ընդհանուր
գէպքերը, նրբամիտ բարով մը, ըզ-
գացման, գորովի, մտացիութեան հը-
րապուրալի ու ներդաշնակ խառնուած-
քով մը: Ֆրանսական ոտմանդիք գը-
րականութեան գլուխ-գործոցներէն
չատերը հայերէնի վերածելով, Մա-
մուրեան — Չիլիսկիերեանի հետ — ա-
մէնէն մեծ ծառայութիւնը մատուց
նորածիլ հայ աշխարհիկ գրականու-
թեան:

Դաստիարակութեան գործին մէջ
Մամուրեան կը գրաւէ ամէնէն լայն
ու պատուաւոր տեղերէն մէկը իբր կէս
դարու շրջանի մը մէջ: Իր պահպա-
նողական, բայց օգտապաշտ ուղղու-
թեան ներքեւ, իր խորին հմտութեան
ու բարոյական ազնիւ նկարագրին
ազդեցութեանը տակ սերունդներ մար-
դուած, դաստիարակուած են:

Անշուշտ արդի սերունդը իր գա-
ղափարներով ու ազատախոհ ձգտում-
ներով իր սրտին մօտիկ, իր համա-
կրանքին արժանի վաստակաւորը չը

պիտի գտնէ Մամուրեանի անձին մէջ:
Անիկա նախորդ բարի սերունդներուն
մտաւորական ներկայացուցիչը, եր-
բեք չի կրնար հաշտուիլ ներկայ սե-
րունդեան բուն խառնուածքին հետ:
Հիմակ, այդ հին շրջանին պատկանող-
ները՝ անտարակոյս այլեւս բարեկե-
սն, եւ մասունքի մը նուիրականու-
թեան հանգամանքովը միայն հանրու-
թեան խունկին ու յարգանքին իրա-
ւունք կունենան:

Մամուրեանի գործունէութիւնը
սկսած է 1851 ին Իզմիրի մէջ կրթա-
կան մասնաւոր հիմնարկութեամբ մը:
Այն ատեն հազիւ 20-22 տարեկան,
չրջանաւարտ Մուրատ-Ռափայէլեան
վարժարանի, ունէր սակայն հարկա-
ւոր հմտութիւնն ու լրջութիւնը այս-
քան ծանր գործի մը ձեռնարկելու
համար:

Սակայն երկար կեանք չունեցաւ
այս անհատական ձեռնարկութիւնը:
Շատ չանցած Մամուրեան տեսուչ
կարգուեցաւ Իզմիրի ազգ. վարժա-
րաններուն, որոնցմէ այդ շրջանին
բազմաթիւ երիտասարդներ ելան տոհ-
մային առողջ ու լուրջ կրթութեամբ
մը օժտուած: 1860էն առաջ Մամուր-
եան Պոլիս կրթալով, վարած է մաս-
նաւոր ուսուցչութեան պաշտօններ:
Քանի մը տարի ետքը հրաւիրուած է
վարելու ազգային պատրիարքարանի
գիւանապետութիւնը. եւ հոն դի-
ւանական գործերուն եւ արձանագը-
րութիւններուն մէջ կարեւոր բարե-
փոխութիւններ ներմուծած է, հին
գրութիւնը հիմնովին ջնջելով: Իր
այդ պաշտօնավարութեան միջոցին
աշխատակցած է հայ թերթերուն, ու
իր հրապարակագրի այս կարճատե-
կեանքէն ետքն է որ գաղափարը յը-
ղացած է հիմնադրու Արեւիկայի Մասալը:

Այս հանդէսը, իր հիմնադրին ծերանալուն հետ ինքն ալ հետգհետէ ինկած էր ու վերջապէս հասած էր իր հիմնական աննախանձելի դրութեանը. փեղցփեղ սոփեասներ մուտ գտած էին հոն, անշուշտ օգտուելով ալեզարդ խմբագրապետին յոգնածութեանէն, եւ վերջին ատեններս այդ թերթին մէջ գտնուեցաւ նաեւ մէկը, զբրական վանտալ մը, որ հրաշալի տպուշութեամբ մը Ձօհրապի պէս ազնուազգի գրագէտ մը վարկարեկ ընելու յանդգնեցաւ:

Ինչ որ ալ ըլլայ, Մամուրեանի հետ կանհետանայ հայկական արգի լեզուին ու գրականութեան նահապետներէն մէկը, ու իր կորուստը անկեղծօրէն ու խորապէս կը վշտահրէ գրչի բոլոր հայ վաստակաւորները:

Ե. Ս.



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Եւրոպարնակ հարուստ հայ մը, ինչպէս որ կը լսենք, հաստատ մտադրութիւնն ունի կրթական հաստատութեամբ մը օժտել ազգը, պայմանով որ այդ հաստատութիւնը վարելու բարեկամեցողութիւնն ու յատկութիւնը ունեցող անձ մը ներկայանայ իրեն: Փափկանկատութիւնը չի թողուր մեզ առ այժմ ծանօթացնել բարեգործին անունը. սակայն կրնանք ըսել թէ իր փափաքն է Ձէյթունի մէջ վարժարան մը բանալ սոսկ իր անձ-

նական ծախքովը, ուր Ձէյթունի մատաղ սերունդը այլապէս հիմնական ու տոնմային դաստիարակութիւն մը կարենայ ստանալ: Ան երկար ատենէ ի վեր յղացած է այս գովելի ծրագիրը, բայց եւ այնպէս չէ կրցած գործադրութեան զնել այն գերազանց պատահով որ չէ գտած լիուրի իրեն վրատահութիւն ներշնչող մէկը որ այսպիսի հաստատութիւն մը վարելու կարող ըլլար ամէն տեսակէտով:

Ձէյթունը հայուն սրտին ամէնէն մօտիկ եւ ամէնէն յիշատակալից վայրերէն մէկն է. հոն ապրող քաջ ու հարազատ հայերը ամէն վայրկեան ազգին հոգածութեանը եւ հսկողութեանը առարկայ պետք է դառնան: Հետեւապէս ակնարկուած ազնիւ հայր լաւագոյն եղանակ մը չէր կրնար ընտրել իր ազգասիրութեան ապացոյցը տալու համար: Կը յուսանք եւ կը մաղթենք որ ձեռնարկին այսքան հրապարակումը բաւական ըլլայ որպէս զի կրթասիրական սոյն գործին իրականացմանը յարմար անձ մը ինքզինքը ընտրելի ներկայացնէ:

— Պոլսէն կը գրեն Մարտի թէ սոյն թերթին այն թիւը որ կը պարունակէր յօդուած մը Տէրտի Սուրբ խորագրով եւ զոր Շարի նախընթաց թիւին մէջ արտատպած էինք, արգիւտեր է թուրքիա մտնել: Պոլսէն Մարտի ընթերցող մը նամակ մը գրելով կը յայտնէ թէ երկու ոսկի տալով միայն յաջողեր է կարգալ այդ յօդուածը սա պայմաններուն մէջ. « Բերա կիմանամ թէ Մարտի արգիւտուած էր այդ օրը եւ թէ անկից օրինակ մը գտնելն իսկ անհնար էր: Հետաքրքրուելով անմիջապէս կերթամ կը գտնամ լրագրավաճառ մը որուն

քով սովորաբար կը կարգամ արգիլուած թերթերը: Մարդը անմիջապէս գաղտնի սենեակ մը կը տանի զիս ու կըսէ թէ ոստիկանութիւնը այնքան աչքը չորս բացած է որ երկու ոսկի տալով միայն կրնամ կարդալ: Կուտամ երկու ոսկին ու կը կարգամ: Իսկ Մարտի մուտքը հետեւեալ պարագաներու մէջ արգիլուած է: Թերթին հրատարակուելէն քանի մը ժամ ետքը Բարիզի օմ. գեսպան Միւնիք պէյ կը հեռագրէր Երլադ յօդուածին բնութիւնը, հեղինակին անունը, թերթին թիւն ու թուականը: Անմիջապէս իրատէ մը հանելով՝ Խալիֆան Մարտի թուրքիա մուտքը կարգիլէր բոլոր թղթատարատանց պաշտօնեաներուն: Սակայն թուրք պաշտօնեաները եւ նամակաբաշխները աւելի հոգածու են իրենց յաճախորդներուն քան Սուլթանին անձին համար: Ուստի միշտ կը յաջողին ծածկել արգիլուած լրագիրներուն մէկ մասը եւ կաշառքի փոխարէն կը յանձնեն ատերերուն: Բայց այս անգամ Սուլթանը ամենախիստ հրամաններ տուած էր: հարիւրի չափ ոստիկաններ նամակատանց փողոցներուն մէջ կը հսկէին՝ լրտեսելով դուրս ելլող անձերը: Եթէ մէկը ձեռքը Մարտի բռնած դուրս ելլար նամակատունէն, ոստիկան մը վրան կը խուժէր եւ թերթը կը խլէր: Եւ յետոյ ուրիշ ոստիկաններ կը հսկէին լրագրավաճառներուն վրայ, գրաւելով արգիլուած թերթը: Ահա թէ ինչչու համար երկու ոսկի վճարեցի:

— Բարիզէն Պ. Գարեգին Մեծատուրեան նամակ մը գրելով խմբագրութեան կը խնդրէ ծանուցանել թէ մօտերս պիտի հրատարակէ Գարտի անունով միամետայ հանդէս մը հողա-

գործական, գիտական եւ արուեստական (պատկերներով): Գարտի նպատակն է ժողովրդականացնել գիտութիւնները, հողագործութիւնը եւ արուեստները: Հայ եւ ֆրանսացի մասնագէտներ պիտի աշխատակցին: Ա. թիւը ի մօտոյ կը հրատարակուի:

Գինն է տարիկան 12 ֆր. արտասահմանի համար: Հասցէն՝ **K. Médzadourian, 23, rue de la Collégiale (V^{me}) PARIS.**

— Հանրածանօթ հայ գրագիտուհի Տիկին Տիւսար մեներ է Պոլիս: Երկար ատենէ ի վեր արդէն քաշուած էր գրական ասպարէզէն:

— Ամերիկայի Պոսթոն քաղաքին մէջ նոր հայ շաքաթաթերթ մը սկըսած է հրատարակուիլ, կոչւոյ անունով: Արտասահմանի հայ թերթերուն տարապայման տուտութեան մէջ չենք գիտեր թէ կոչւոյ ինչ պակաս մը լրացնելու եկած է:


— Թայիլի Վիէննայի թղթակիցը կը հաղորդէ թէ Մակեդոնիոյ մէջ գործերը այնքան դէշ վիճակ մը ստացած են որ դիւանագիտական շրջանակներու մէջ անկարելի կը դատուի պայթուածի մը առաջը առնել մինչեւ մէկ տարի:

— Նիւթերու առատութեան պատճառով « Գաղթականներու » շարունակութիւնը յաջորդ թուով:

Отговорникъ В. Димитровъ, адвокатъ

Печатница «Ориенталъ» — Варна.

ԱՌԻՔԷՆ ՕԳՏՈՒԵՑԷՔ



ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՕԹԸ ԱՐԱՐՈՒԱԾ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵՍՆԻ

Սոյն գիրքը ուր 120 էջերէ կը բաղկանայ և մաքուր տպագրութեամբ, փոխանակ 1 ֆրանքի

50 սանթիմի կը ծախուի,

գիմել «Արևելեան» տպարան Օննիկ Բարսեղեանի, վառնա:

Փոսթի ծախքը՝ 10 սանթիմ՝ գնողներու վրայ է. դրամի փոխարէն նամակաղբւղձ կ'ընդունուի:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Երկրորդ քաղ, Շիրազնասա փողոց, (Մագալլը լեշնէի կից)

Կը ապագրուին հայերէն, պուլլարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցետուն, հասցէտուն, հարսանեկան հրատարակիչ, ազգարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազդ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:

Գունաւոր և սևեղծ զարդագործերու համար ամէն լեզուէ ձոխ տասեր և մասնաւոր գործիքներ կը գանուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵԸ ՅՈՅԺ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրի՛ք ֆաղաֆներէ եկած յանձնարարութիւններ նետութեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

11 Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).